«Շիրակացու ճեմարան»
Միջազգային գիտակրթական համալիր

Ընդունելության քննություն

Մաթեմատիկա (5-րդ դասարան)

2025-2026 ուստարի

16. 06. 2025

Ազգանուն, անուն, հայրանուն _____

Դպրոց _____

Ծածկագիր	

Կտրման գիծ----------

Ծածկագիր	

Մինչև թեստը սկսելը խնդրում ենք ուշադիր կարդացեք այս հրահանգները

- Գրեք Ձեր անունը և դպրոցը այս էջի վերևում:
- Պատասխանեք այս թեստի բոլոր հարցերին, օգտագործելով միայն *կապույտ կամ սև գրիչ.* կարող եք այն վերցնել թեստը վերահսկողից:
- Յուրաքանչյուր խնդրի լուծում գրեք խնդրի ներքևում հատկացված տեղում, իսկ ընտրովի պատասխաններով խնդիրների ճիշտ պատասխանների համարները վերցրեք օղակի մեջ:
- Մի բացեք մետաղական ամրակները: Եթե հաշվարկների կամ նշումների համար լրացուցիչ տեղի կարիք ունեք, օգտագործեք էջի հակառակ կողմը:
- Յուրաքանչյուր ճիշտ լուծված առաջադրանքի համար դուք կստանաք հարցի համարի կողքին նշված միավորը:
- Խնդրում ենք գրեք կոկիկ և ընթեռնելի, գծագրերը գծելիս օգտագործեք քանոն և մատիտ:
- Չի թույլատրվում է օգտագործել **հաշվիչ**:
- Առաջադրանքի տևողությունը 90 րոպե է:

Մաղթում ենք հաջողություն

Միավորների ընդհանուր գումարը	
Գնահատականը 20 միավորային համակարգով	
Ստուգողի ազգանունը և ստորագրությունը	
Առարկայական հանձնաժողովի նախագահ	
Վերանայման (վերջնական) գնահատական	
Վերանայման հանձնաժողովի նախագահ	

1. Գրի՛ր այն թիվը, որի գրությունը համապատասխանում է յոթ հարյուր հազար ութսունվեց թվին.

Պատասխան՝_____

2. Նշվածներից ո՞րն է թվի գրության 3-րդ կարգի կարգային միավորը։

1) 100 **2)** 300 **3)**1000 **4)** 3

3. Աննայի մտապահած թվի և 125-ի տարբերությունը 8 անգամ մեծ է 40-ից։ Ո՞ր թիվն է մտապահել Աննան։

Պատասխան՝_____

4. Աստղանիշերով ծածկագրված են թվանշաններ։ Բերվածներից ո՞րն է ճիշտ։

1) 703*6 > 70399 **2)** *** > ***8

3) ***1 > 7** **4)** 2*654 < 1*654

5. Ընտրի՛ր տրված թվանշաններից այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս անհավասարություն . 7կմ 40դմ > 7կմ * մ

1) 6 **2)** 4 **3)** 2 **4)** 5

6. Ինչպե՞ս կփոփոխվի երկու թվերի գումարը, եթե գումարելիներից մեկը մեծացնենք 50-ով, իսկ մյուսը փոքրացնենք 30-ով։

Պատասխան՝_____

7. Ուղղանկյան պարագիծը 40սմ է, որը 8 անգամ ավելի է նրա լայնությունից։ Հաշվի՛ր այդ ուղղանկյան մակերեսը։

8. Կատարի՛ր գործողությունները։

7 կմ 20 մ – 3 կմ 209 մ=_____

6 տ 3 ց 40 կգ – 9 ց 60կգ=_____

9. Գրադարանը կահավորելու համար հատկացրին 73608 դրամ: Այդ դրամի $\frac{3}{8}$ -ը ծախսեցին: Որքա՞ն դրամ մնաց:

Պատասխան՝ _____

10.Արտահայտի՛ր նշված միավորով:

ա) $\frac{3}{4}$տ = կգ

բ) $\frac{3}{5}$ կմ= դմ

գ) $\frac{7}{8}$ օր= ր

11.Ընտրի՛ր այն թվերի շարքը, որում թվերը բաժանվում են 2-ի առանց մնացորդի:

1) 22; 841; 564; 8718 **2)** 33; 552; 897; 960

3) 52; 844, 566, 8790 **3)** 244; 165; 723; 590

12. Գտի՛ր արտահայտության արժեքը: 90798 +(2003 - 77470 : 254) · 27

Պատասխան՝ _____

13. Համառոտագրի՛ր և լուծի՛ր:

Ճեպընթաց գնացքը շարժվելով 64 կմ/ժ արագությամբ 2 քաղաքների միջև եղած հեռավորությունը անցավ 15 ժ-ում: Մարդատար գնացքը նույն ժանապարհի մի մասը 8 ժ-ում անցավ 45 կմ/ժ արագությամբ, իսկ մնացած մասը 50 կմ/ժ արագությամբ: Քանի՞ ժամում մարդատար գնացքն անցավ 2 քաղաքների միջև եղած հեռավորությունը:

14. Համառոտագրի՛ր և լուծի՛ր։

Չորս իրար հաջորդող զույգ թվերի գումարը 1492 է։ Գտի՛ր այդ թվերը։

15. Մի ավազանում կար 4 անգամ ավելի շատ ջուր, քան երկրորդում: Երբ առաջին ավազանում ավելացրին 34 լ ջուր, իսկ երկրորդ ավազանում՝ 21լ, ապա երկու ավազաններում միասին եղավ 440 լ ջուր: Պարզի՛ր, թե սկզբում որքա՞ն ջուր կար ավազաններից յուրաքանչյուրում:

16. Բացահայտի՛ր օրինաչափությունը և լրացրո՛ւ վանդակները:

78	57
36	**19**

56	31
45	

48	33
88	

17. Աշակերտը մաթեմատիկայի առաջադրանքների կատարման համար ծախսեց առաջադրանքների կատարման ընդանուր ժամանակի $\frac{2}{5}$ մասը, ժամանակի մնացած $\frac{1}{3}$ մասը ծախսեց մայրենիի առաջադրանքների կատարման համար, որից հետո մնացած ժամանակի $\frac{2}{3}$ մասը՝ անգլերենի և վերջին 25 րոպեն ռուսերենի առաջադրանքները կատարելու համար: Որքա՞ն ժամանակ ծախսեց աշակերտը բոլոր առաջադրանքների կատարման համար: